

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐԻ
ԼՎՈՎՈՒՄ ԲԱՑՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ

1932 թ. Հունիս-սեպտեմբեր ամիսներին Լվով քաղաքում, որն այն ժամանակ գտնվում էր Լեհաստանի կազմում, բացվեց Հայկական մեծ ցուցահանդես, որը կարևոր միջոցառում էր ոչ միայն լեհահայերի, այլև ողջ քաղաքի կյանքում:

Հայկական Հնությունների ցուցահանդես կազմակերպելու ցանկություն վաղուց կար Լվովում: Այդ մասին դեռևս 1927 թ. լեհական թանգարանային աշխատողների ընդհանուր ժողովն ընդունել էր հատուկ որոշում: 1930 թ. Տարնով քաղաքում այդ որոշմանը տրվեց պաշտոնական բնույթ և Հայկական ցուցահանդեսի կազմակերպման գործն իրենց ձեռքը վերցրեցին «Լվովի անցյալի բարեկամների ընկերությունը» և «Լվովի արքեպիսկոպոսական թեմի Հայոց ընկերությունը»: 1931 թ. դեկտեմբերի 27-ին նրանք ստեղծեցին գործադիր մարմին՝ կոմիտե, որի մեջ ընդգրկվեցին Հայ և լեհ նշանավոր արվեստագետներ, պատմաբաններ և Հոգևորականներ: Նախագահ ընտրվեց նշանավոր լեհահայ արվեստագետ Յան Անտոնևիչը: Ցուցահանդեսի Հովանավորն էր Լվովի Հայ արքեպիսկոպոս Յուզեֆ Թեոդորովիչը, որը մեծ հեղինակություն ուներ Լեհաստանում:

Գործադիր մարմնի անդամները՝ 12 հոգի, շատ դժվարություններ հաղթահարելուց հետո, հավաքում են մեծ թվով արժեքավոր ցուցանմուշներ: Այդ գործին զգալի օժանդակություն է ցույց տալիս Լվովի Հայկական Ս. Աստվածածին եկեղեցին (կառուցված XIV դարում), որը բացել էր իր հարուստ պահեստարանները կոմիտեի անդամների առջև: Նյութեր բերվեցին նաև Ստանիսլավ քաղաքի (այժմ Իվանո-Ֆրանկովսկ) Հայկական եկեղեցուց, Լվովի քաղաքապետարանի արխիվից, Պավարովսկի և Օսոլինսկի գրադարաններից, Լվովի համալսարանի գրադարանից, Լվով քաղաքի պատմական թանգարանից, «Յան Երրորդ Սոբեսկի» ազգային թանգարանից, «Բոլեսլավ Օժեխովիչ» պատկերասրահից, ինչպես և այլ արխիվներից ու անհատ անձանց հավաքածուներից:

Շատ կարևոր էր Լվովի քաղաքապետարանի տրամադրած դրամական շուայլ օգնությունը, որի շնորհիվ հնարավոր եղավ 1932 թ. Հունիսի 19-ին բացելու «Լեհաստանի Հայկական հուշարձանների ցուցահանդեսը»: Դա առաջին փորձն էր ի մի բերելու Լեհաստանի Հայոց անցյալի հուշարձանները և լավ պատկերացում էր տալիս, թե՛ Լվովի Հայերի և թե՛ լեհահայոց պատմության ու մշակույթի մասին:

Ցուցահանդեսում հավաքված նյութերը կարելի էր բաժանել երկու մասի: Դրանցից մեկը պատմական Հայրենիքից՝ Հայաստանից ու արևելյան երկրներից բերվածներն էին, մյուսը՝ այն, ինչ ստեղծել էին Հայերը Լեհաստանում ապրած ժամանակ: Բնական է, որ վերջիններս կրում էին շրջակա երկրների ու ժողովուրդների մշակույթի ազդեցությունը:

Ցուցահանդեսը բաղկացած էր հետևյալ հինգ բաժնից՝ 1-ին՝ եկեղեցական հուշարձաններ, 2-րդ՝ կրոնական նկարներ և դիմանկարներ, 3-րդ՝ նկարազարդ ձե-

ուղղորդող ու վավերագրեր, 4-րդ՝ հայերը լեհ գրականության և երաժշտության մեջ, 5-րդ՝ զծագրեր, հատակագծեր, լուսանկարներ և այլն:

Ցուցադրված նմուշների մեջ ամենաարժեքավորը 1197 թ. Սկեռայի հուշակավոր Ավետարանն էր, որն այն ժամանակ Լվովի հայկական արքեպիսկոպոսարանի սեփականությունն էր և պահվում էր վանքի գրադարանում: Մադաղաթյա այդ ձեռագիրը Լվով է հասցվել Ղրիմի վրայով և 1592 թ. նորոգվել լեհահայ Զատիկի որդի պարոն Թորոս Պեռնաթենցի միջնորդությամբ: Ցուցահանդեսի փակումից տարիներ անց՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, Ավետարանն անհետացավ:

Նույն բախտին արժանացավ նաև XVII դարի հեղինակ Սիմեոն Լեհացու Ուղեգրությունը, որը ևս դրված էր ցուցահանդեսում: Լավ է, որ ցուցահանդեսի բացմանը ժամանած վաստակաշատ հայագետ Ներսես Ակինյանը հետաքրքրվում է այդ աշխատությունը և Վիեննա վերադառնալուց հետո Լվովի համալսարանից (Վիեննայի համալսարանի վարչության միջնորդությամբ) ստանում նրա բնագիրը, ընդօրինակում և հրատարակում սկզբում «Հանգես Ամսօրյայում» (1932–1934 թթ. համարներում), իսկ հետո՝ առանձին գրքով (1934 թ.): Դրա շնորհիվ Սիմեոն Լեհացու ուղեգրությունները դարձան ընթերցողների սեփականությունը: Կարճ ժամանակում այդ գիրքը լրիվ կամ հատվածաբար թարգմանվեց և լույս ընծայվեց իտալերեն (1962 թ.), թուրքերեն (1964 թ.), ռուսերեն (1965 թ.) և անգլերեն (1968 թ.), իսկ վերջերս էլ՝ արևելահայերեն (1997 թ.):

Ցուցադրված ձեռագրերի մեջ է եղել նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա կազմված և 1519 թ. լեհ թագավոր Սիգիզմունդ I-ի կողմից հաստատված «Լեհահայոց դատաստանագիրքը»: Այդ գրքի հայերեն բնագիրը չի պահպանվել, մեզ են հասել նրա լատիներեն, լեհերեն և ղփչաղերեն թարգմանությունները (լատիներենը կատարված է հայերեն բնագրից, լեհերենը՝ լատիներենից, իսկ ղփչաղերենը՝ լեհերենից): Ցուցադրվածը լատիներեն թարգմանությունն է եղել, որը XVI դարում ներկայացրել էին լեհ թագավորին: Դա Լվովի քաղաքային արխիվում հայտնաբերել և 1857 թ. Վիեննայում հրատարակել է Լվովի համալսարանի պրոֆեսոր Ծ. Բիշոֆը:

Ցուցահանդեսում ներկայացված են եղել նաև այլ ձեռագրեր՝ ավետարաններ, տաղարաններ, սաղմոսարաններ, վարքագրություններ և այլն: Փաստաթղթերի մեջ էին հայերի՝ Ստանիսլավից և Լվովի արխիվներից բերված ծննդոց ու մեռելոց մատյաններ, կտակներ, հարսանեկան պայմանագրեր և այլ արժեքավոր նյութեր:

Ցուցահանդեսի այցելուների հետաքրքրությունը գրավել են սրբապատկերները, խաչերը, մասնատուփերը, սկիզները, շուրջառները, Լվովի հայ ոսկերիչների ու արծաթագործների պատրաստած զարդերը, դերձակների կարած զգեստները, հյուսածո գոտիները, ինչպես նաև ոսկեհյուս և արծաթահյուս կերպասները: Ցուցադրված են եղել Լվովի տասնմեկ հայ արքեպիսկոպոսների դիմանկարները, որոնց մեջ Նիկոլ Թորոսովիչի (XVII դար), Վարդան Հունանյանի (XVII–XVIII դդ.),

Յան Ավգուստինովիչի, Յան Թումանովիչի (XVIII դար), Իսահակ Իսահակովիչի (XIX դար) նկարները¹:

Լվովի Հայերի մոտ սովորություն է եղել դադաղների մեջ գետեղել Հանգուցյալների յուղաներկ դիմանկարները, որոնցից պահպանվել են մի քանիսը: Դրանք ևս տեղ են գտել ցուցանմուշների մեջ: Ներկայացված են եղել նաև Լվովի Հայ բենեդիկտյան կույսերի վանքի ինը արրայամայրերի դիմանկարները, որոնցից Հնագույնը Մարի Ներսեսովիչի նկարն էր (XVIII դարի սկիզբ): Այդ արքայամոր զդեստոր և գավազանն այն ժամանակ դեռևս պահպանված էին և գտնվում էին Հայկական կուսանոցում:

Ի թիվս նկարների, ցուցադրված է եղել նաև լեհ Հանճարեղ կոմպոզիտոր Ֆրեդերիկ Շոպենի աշակերտ Կարլ Միքուլիի (Կարապետ Միքայելյան) դիմանկարը, կատարված XIX դարի լեհ նկարիչ Ֆրանսուա Թեփայի ձեռքով: Կարլ Միքուլին Լվովի կոնսերվատորիայի տնօրենն էր, գաղնակահար, կոմպոզիտոր և մանկավարժ: Նա Հայտնի է նաև նրանով, որ առաջինն է իրականացրել իր մեծանուն ուսուցչի ստեղծագործությունների հրատարակությունը:

Ցուցահանդեսում մեծ թիվ են կազմել կրոնական թեմայով նկարները, որոնցից Հնագույնները կրելիս են եղել Հայկական արվեստին բնորոշ գծերը, իսկ ավելի ուշ շրջանում ստեղծվածները, ըստ Բրոնիսլավա Վույչիկ-Քեոփրոլյանի «լավագույն ձևով ցույց կուտան Լեհաստանի Հայերի աստիճանական հեռացումը Արևելքից և մոտեցումը Արևմուտքին»²:

Չի մոռացվել քանդակագործությունը: Ցուցանմուշների մեջ են եղել Քրիստոսի խաչելության փայտե մեծ քանդակը (XVII դար), որ պատկանելիս է եղել բենեդիկտյան կույսերին, ինչպես և Քրիստոսի խաչելությունը պատկերող քանդակի բեկորները, բերված Լվովի Հայկական հիվանդանոցից:

Լվովում շատ Հայտնի էին Հայ զինագործները, որոնց պատրաստած գնդերը, ձիերի արծաթապատ զարդերը հռչակված էին Լեհաստանում և նրա սահմաններից դուրս: Ցուցահանդեսում եղել է Հայ արհեստավորների պատրաստած երեք թուր, զարդարված ոսկով ու թանկարժեք քարերով: Նրանցից մեկի վրա ընթերցվում էր տիրոջ անունը՝ «Արիստակէս» և պատրաստման թվականը՝ 1691: Ի դեպ, մինչև հիմա Վարչավայում լեհական բանակի թանգարանում ցուցադրված են Հայերեն արձանագրությամբ թրեր (թվով երեք), որոնք պետք է որ Լվովի Հայ արհեստավորների պատրաստածը լինեն:

Ցուցահանդեսի առանձին բաժիններում ներկայացված են եղել Լեհաստանում և Ուկրաինայում ստեղծագործած Հայ գրողների, գիտնականների գործերը և նրանց մասին գրված աշխատությունները:

Հինգերորդ բաժինը Հատկացված էր երաժիշտներին: Հատկապես կարևոր նյութեր են եղել Լեհահայ կոմպոզիտորների վերաբերյալ: Լավ էր ներկայացված Յուզեֆ Նիկորովիչը, հռչակավոր խորալի հեղինակը, որի ստեղծագործությունը դարձել էր լեհական սիրված երգերից մեկը: Մեկ այլ լեհահայ կոմպոզիտոր գրել է կրոնական Ֆրեդեր, որոնք դարձել են ժողովրդական ու տարածվել Լեհաստանով

1 Բրոնիսլավա Վույչիկ - Քեոփրոլյան. Լեհաստանի Հայ պատմական հիշատակարաններու ցուցահանդես. - «Անահիտ», Փարիզ, 1932 Նոյեմբեր-1933 ապրիլ, էջ 48:

2 Նույն տեղում:

մեկ: Յուզացիները էին նաև նրա գործերը: Երրորդը Կարլ Միքուլին էր, որի մասին խոսք եղավ վերը:

Ներկայացված են եղել Լեհաստանում և Ուկրաինայում կառուցված Հայկական եկեղեցիների ու մատուռների, ինչպես նաև արդեն ավերված Հուշարձանների նկարներ:

Յուզացիները լուրջ արձագանք ունեցավ Լվովում և նրա սահմաններից դուրս: Նրա մասին հրատարակվեցին հոդվածներ և հաղորդումներ, լույս տեսան ցուցանմունքների մի շարք լուսանկարներ: Լվովի հայ արքեպիսկոպոսարանի «Սուրբ Գրիգորի պատվիրակը» լեհերեն ամսագրում հոդված տպվեց ցուցահանդեսի մասին: Առանձին գրքով լույս տեսավ ցուցահանդեսի ընդարձակ ուղեցույցը (լեհերեն), որը կազմել էին այդ միջոցառման ակտիվ մասնակիցներից Ալեքսանդր Ջուլովսկին, Լուցյա Խարեվիչովան, Մյեդիսլավ Գենբարովիչը, Բրոնիսլավա Վուլչիկ-Քեոփրուլյանը³, Թադեոզ Մանկովսկին և Ռուդոլֆ Մենեցկին: Կազմակերպիչները հույս ունեին, որ հավաքված նյութերը կարող են հիմք հանդիսանալ Լվովում հայկական թանգարան բացելու համար, որը նրանք ցանկանում էին ստեղծել Ս. Աստվածածին եկեղեցուն կից: Բայց պատմությունն այլ կերպ տնօրինեց. 1939 թ. խորհրդային զորքերը մտան Արևմտյան Ուկրաինա, գրավեցին նաև Լվովը: 1941 թ. ամռանը Լվով ներխուժեցին գերմանացիները, որտեղից նրանց դուրս քշեցին 1944 թ.: Լվովահայերի մեծ մասը, որպես Լեհաստանի քաղաքացիներ, հեռացավ Վրոցլավ, Կրակով ու լեհական այլ քաղաքներ: Երբ 1939 թ. խորհրդային զորքերը գրավել էին Լվովը, հայ հոգևորականները ձեռնարկվել ու աքսորվել էին Սիբիր: Արքեպիսկոպոսարանի հարուստ գրադարանը թալանվել էր: Հազարավոր գրքեր պատուհաններից թափվել էին փողոց: Ս. Աստվածածին շքեղ ու հարուստ եկեղեցին թալանվել էր, իսկ 1945 թ. հետո դարձել էր Ուկրաինական ազգագրական թանգարանի պահեստարան: Այնտեղ էին տեղավորել երեք հազարից ավելի հին ռուսական և ուկրաինական մեծարժեք սրբապատկերներ: Հիսուսն տարուց ավելի այդ հսկայական շենքը չի ջեռուցվում: Սաստիկ խոնավությունից փչանում են եկեղեցու որմնանկարներով ու խճանկարով ծածկված պատերը, սյուները: Ողբալի վիճակում են պահեստավորված սրբապատկերները: Յուզաներկն անջատվել է փայտից, և մասնագետները դեռ չեն գտել դրանց փրկելու միջոցը: Եթե դրանք տարվեն որևէ տաք շինություն, յուզաներկը չորանալով անմիջապես կպոկվի փայտից և կթափվի ցած, այսպես դեռ մի կերպ գիմանում են: Նաև այս պատճառով թանգարանը չէր կարող ազատել հայոց եկեղեցու շենքը, որը վերջերս որոշված է տալ Լվովի հայկական համայնքին:

Չխնայվեցին անգամ գերեզմանային Հուշարձանները: Ոսկե զարդեր որոնողներն անխնա քանդում ու ոչնչացնում էին Լվովի հնագույն դերեզմանատների Հուշարձանները: Մեծապես տուժում էին նաև հայկական Հուշարձանները: Լվովի հայկական եկեղեցու բակը լեցուն է պատմական Հուշարձաններով, որոնց մեջ աչքի է ընկնում խաչելուժյան փայտե արձանախումբը: Ժամանակին նրա մոտ նկարահանվել են «Բողոք» հայտնի կինոնկարի որոշ հատվածներ: Բակը չէր պահպան-

3 Բ. Վուլչիկ-Քեոփրուլյանն ազգությունը լեհուհի էր՝ ամուսնացած Հայի հետ: Նրա ամուսինը հայոց լեզու էր դասավանդում Վարչավայի ու Լվովի համալսարաններում և հեղինակ է հայերեն դասագրքերի:

վում, և զբոսաշրջիկներն անարդել կարատում և հափշտակում էին հուշարձանի որոշ մասեր (այդ թվում և քանդակված հրեշտակների գլուխները):

Արևմտյան Ուկրաինայում հուշարձանների ոչնչացումը սկսվել էր 1917 թ. անմիջապես հետո: Հինավուրց Կամենեց-Պոդոլսկ քաղաքում, որը շատ հարուստ է պատմական ու ճարտարապետական հրաշալի հուշարձաններով, ստեղծվել էր պետական հատուկ կազմակերպություն, որը ղեկավարում էր պատմական հուշարձանների ավերման դործը: Պլանաչափ կերպով վերացվում էին հնության հետքերը: Հիմնահատակ ավերվեց հայկական Ս. Նիկողայոս հսկայական եկեղեցին, բազմաթիվ շենքեր, ամբողջ թաղամասեր: Մոդելիով-Պոդոլսկ քաղաքում քանդվեց 1772 թ. հիմնադրված Ս. Աստվածածնի Անարատ Հղության հայկական եկեղեցին և նրա քարերով կառուցվեց մի բաղնիք: Ավելի ուշ ավերվեցին հայկական դերեզմանատան հուշարձանները և այնտեղ կառուցված մատուռը:

1950-ական թթ. կեսերին քանդեցին Իվանո-Ֆրանկովսկի մարզի Տիսմենիցա ավանի ճարտարապետական ամենանշանավոր կոթողը՝ հայկական Ս. Աստվածածին եկեղեցին (հիմնադրված 1750 թ.): Ավերեցին Ակքերման (այժմ՝ Բելզորոդ-Դնեստրովսկի) քաղաքի հայկական հինավուրց դերեզմանատունը, իսկ դեռևս թուրքական տիրապետության ժամանակներում կառուցված հայկական եկեղեցին դարձրեցին հակակրոնական քարոզչության թանգարան:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ռազմական դործողությունների հետևանքով մեծ ավերմունքների ենթարկվեցին Յազլովեց (այժմ՝ Յալուտովկա Տերնոպոլի մարզի Բուչաչի շրջանում) գյուղի հայկական հուշարձանները, հատկապես Ս. Աստվածածին եկեղեցին, նրա զանգակատունը, կից շինություններն ու քաղաքի պաշտպանական ամրությունները, որոնց մի մասը հայերն էին կառուցել և թուրք-թաթարական հարձակումների ժամանակ այնտեղից էին դեմադրում թշնամուն: Մինչև հիմա Յազլովեցում վերանորոգման աշխատանքներ չեն տարվել: Լավ է, որ հիմնովին նորոգվեցին Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական եկեղեցու զանգակատունը (XVI դար), որն ի գեպ, դարձել է այդ քաղաքի խորհրդանիշը, հայերի կառուցած ջրհորը (XVI դար) և «Հայկական ամրությունը»:

Հետպատերազմյան տարիներին հետևողական «աշխատանք» տարվեց վերանվանելու Ուկրաինայի տարածքում եղած հայկական տեղանունները: Կամենեց-Պոդոլսկ քաղաքի մոտ, Ամոտրիչ դետի ափին, հայերը շատ դարեր առաջ հիմնադրել էին երկու դյուղ՝ Վելիկիյե Արմյանե և Մալիյե Արմյանե: 1947 թ. նրանք վերանվանվեցին Վելիկոզալեսյե և Մալոզալեսյե: Չերնովիցի քաղաքի «Հայկական» փողոցին տրվեց Կարլ Մարքսի անունը, իսկ Մոդելիով-Պոդոլսկի «Հայկական» փողոցը կոչվեց «Կարմիր բանակի» փողոց: Եվ այսպես՝ ամենուր: Անհետացան մեծ թվով ձեռագրեր մատյաններ, դիվանական փաստաթղթեր, նկարներ, քանդակներ, կիրառական արվեստի սքանչելի դործեր: Կորածների թվում են Կամենեց-Պոդոլսկի Ս. Նիկողայոս եկեղեցում պահվող փաստաթղթերը, հայկական գաղութի կնիքը, դրոշը, լեհ թագավորներից ստացված հրովարտակները և եկեղեցու ամենամեծ սրբությունը՝ Աստվածամոր սրբապատկերը, որը, ըստ որոշ գիտնականների, հայերը բերել էին Անիից: Թուրքական հարձակման պատճառով քաղաքից հեռացած հայերը 1672 թ. սրբապատկերը իրենց հետ տարել էին Բուլղարիա (Ֆիլիպպոպոլիս, այժմ՝ Պլովդիվ) և 1701 թ. կրկին վերադարձրել Կամենեց: Մեր դարի 20-ական թթ.,

արձաթեթի թանկարժեք կափարիչ ունեցող այգ սրբապատկերը տարվել է ինարկով, իսկ հետո նրա հետքերը կորել են:

Գրավելով Լվովը և ուկրաինական այլ քաղաքներ, գերմանական զավթիչները թալանում էին նաև գրադարաններն ու արխիվները: Հայտնի է, որ 1944 թ. գարնանը գերմանական իշխանութիւնների կարգադրութեամբ Լվովի գրադարանների բոլոր արժեքավոր ձեռագրերն ու հնատիպ հազվագյուտ գրքերը երկաթուղային վագոններով ուղարկվել են Արևմուտք: 1945 թ. այգ վագոնները Հայտնաբերվել են Գերմանիայի Ադելսդորֆ քաղաքում (ներքին Սիլեզիա, այժմ՝ Զագրոգնո, Լեհաստանի կազմում): 1944 թ. Վարչավայրի ապստամբութեան ժամանակ ֆաշիստները մի տեղ էին հավաքել Վարչավայրում եղած հին ձեռագրերը, արժեքավոր վավերագրերը և ոչնչացրել միանգամից: «Народна библіотека»-ի ձեռագրատանը եղած 40.000 հին ու նոր ձեռագրերից ոչնչացվել է 38.000-ը: Փրկված ձեռագրերի մեջ 1970 թ. ինձ հաղողվեց գտնել երկու հայերեն ձեռագիր: Մեկը մագաղաթյա մի «Աղօթագիրք» էր (մոտավորապես XVII դարի), մյուսը՝ «Պատարագամատոյց» (1734 թ.): Եթե փրկված 2000 ձեռագրերի մեջ եղել են այդ երկուսը, հապաորքա՞ն են եղել դրանք ոչնչացված 38.000-ի մեջ: Այդ հարցին ոչ ոք չի կարող պատասխանել, քանի որ գերմանացիները ոչնչացրել են նաև ձեռագրերի անտիպ ցուցակները: Բացի այդ, նրանք գնդակահարել էին այն բոլոր մարդկանց, ովքեր կազմել են ցուցակները և քաջ ծանոթ էին այդ հարուստ հավաքածուին: «Պատարագամատոյց» գրվել է Լվովում: Պետք է կարծել, որ Լվովից տարված այլ ձեռագրեր էլ են եղել այնտեղ, որոնք ժամանակին ցուցադրվել են 1932 թ. ցուցահանդեսում: Ոչնչացվել են Վարչավայրի համալսարանի 4000 ձեռագրեր ևս: Փրկված 200 ձեռագրերի մեջ մնացել է մի հայերեն համայն...:

Կիևից նահանջելու ժամանակ, 1943 թ. հոկտեմբերին, գերմանացիները թալանել էին Ուկրաինական ԽՍՀ կենտրոնական պատմական արխիվը՝ նրա հարուստ ֆոնդերից առանձնացրել մեծ քանակությամբ փաստաթղթեր և երկաթուղային չորս վագոններով ուղարկել Գերմանիա: Հետո նրանք պայթեցրել և հրկիզել էին համալսարանի շենքը, ուր տեղավորված էր արխիվը: Թալանված նյութերի մեջ էր նաև Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի XVI-XVII դդ. արձանագրութեանների 32 մատյան: Խորհրդային զորքերի արագ առաջխաղացումը թույլ չի տալիս ֆաշիստներին թալանված նյութերը հասցնելու Գերմանիա: Այգ վագոններից երեքն ընկնում են խորհրդային, մեկը՝ Չեխոսլովակիա մտած ամերիկյան զորքերի ձեռքը: 1944 թ. ամերիկյան կողմը այդ վագոնը հանձնում է ռուսներին: Պարզվում է, որ փրկված փաստաթղթերի մեջ էին հայկական դատարանի արձանագրութեանների 27 մատյաններ, մնացած հինգը, որոնց մեջ արձանագրութեանների հնագույն մասն էր, ոչնչացել կամ անհետ կորել է:

Ինչպես վերը նշեցինք, պատերազմի ժամանակ անհետացել էր նաև Լվովի հայ արքեպիսկոպոսարանի գրադարանում պահվող 1197 թ. Սկևռայի մագաղաթյա Ավետարանը: Բոլորովին վերջերս պարզվեց, որ այդ մեծարժեք ձեռագիրը ոչնչացված չէ: 1996 թ. աշնանը Երևանում նշանավոր արվեստագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ կազմակերպված դիտական նստաշրջանի ժամանակ ավստրիացի գիտնականներ Հայդե և Հելմուտ Բուշտոլցներին զեկուցումից իմացվեց, որ այդ ձեռագիրն այժմ պահվում է Լեհաստանի Պոզնանի վոյեվոդութեան կազմում գտնվող Գնեզնո փոքրիկ քաղաքի արքեպիս-

կոպոսարանի արխիվում: Պատերազմի ժամանակ Ավետարանը թաքցված է եղել: 1945 թ. Լվովի հայերին, որպես լեհահայատականների, թույլ են տվել տեղափոխվելու Լեհաստան: Գաղթողներից մեկը՝ հայ եկեղեցական Յուզեֆ Կովալչիկը, իր զգեստների տակ թաքցրած ձեռագիրը տարել է Լեհաստան և հանձնել կարգինալ Վիշինսկու մարդկանց: Արանք էլ (կամ գուցե հենց կարգինալը) ձեռագիրը նվիրել են Գնեզնոյի արքեպիսկոպոսական արխիվին: Այդ ձեռագիրը Լվովի հայկական Ա. Աստվածածին եկեղեցու սեփականությունն է: Նրա տերը հայ ժողովուրդն է և ամեն ինչ պետք է արվի ձեռագիրը Լեհաստանից ետ բերելու համար:

Ժամանակները փոխվեցին, փոխվեց նաև Ուկրաինայի հայկական հուշարձանների նկատմամբ վերաբերմունքը: 1989 թ. սկզբներին Լվովում ստեղծվել է հայ մշակույթի «Աղբյուր» ընկերությունը, որի անդամները ձեռնամուխ են եղել քաղաքի հայկական հուշարձանների մաքրման ու նորոգման գործին: Ընկերության հիմնադիր ժողովի ժամանակ ներկայացվել էին Լվովի հայկական թաղամասի, Ս. Աստվածածին եկեղեցու և այլ հուշարձանների նորոգման նախագծերը՝ կատարված «Ուկրաինական նախագծային վերանորոգման» ինստիտուտի Լվովի բաժանմունքի առաջադրանքով (հեղինակներ՝ Ի. Վ. Նովակիվսկայա, Ի. Վ. Մաքսիմյուկ և Օ. Ե. Դուբինսկայա): Պետք է հուշալ, որ դրական աշխատանք կատարվի, բայց այլ վայրերի հայկական հուշարձանները՝ հատկապես Լիսեցի, Անյատինի, Բերեժանիի, Խոտինի ու Ժվանցի եկեղեցիները գտնվում են ծայր աստիճան քայքայված վիճակում: Եվս մի քանի տարի և նրանք կսկսեն ավերվել:

Հայ-ուկրաինական հարաբերությունները թևակոխել են նոր շրջան: Եթե նախկինում գրանք գաղթական համայնքների ու տեղական կառավարության միջև հաստատված հարաբերություններ էին, այժմ բարձրացել են պետական մակարդակի: Հետևապես Ուկրաինայի տարածքում եղած հայկական հուշարձանների պահպանության, կորած արժեքավոր ձեռագրերի, փաստաթղթերի ու արվեստի գործերի որոնման հարցը ևս պետք է դառնա միջպետական երկխոսության առարկա: Առավել ևս, որ Ուկրաինական դիտական հասարակայնությունը տասնամյակներ շարունակ բարձրացնում է հայկական հուշարձանների փրկության ու լավագույն ձևով պահպանելու խնդիրը և շատ լուրջ մտադրություններ ունի Լվովի հինավուրց հայկական Ս. Աստվածածին եկեղեցուն կից բաց անելու հայկական թանգարան, որտեղ կհավաքվեն ու կպահպանվեն նաև այն նյութերը, որոնք 67 տարի առաջ ցուցադրվել են Լվովում բացված մեծ ցուցահանգեսի ժամանակ:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. Ռ. ԳՐԻԳՈՐԹԱՆ